Primavera Foundation
Պրիմավերա ֆաունդեյշն

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏ – ԱՊՐԻԼ 2023 Թ.

www.primavera-foundation.am

Primavera Foundation
Պրիմավերա ֆաունդեյշն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մեր մասին 2

2. Մեր գործունեությունը 2022 թվականի դեկտեմբերից մինչև 2023 թվականի փետրվարն ընկած ժամանակահատվածում 2

3. Մեր գործունեությունը 2023 թվականի մարտին և ապրիլին 2

4. «Primavera Foundation» թիմի աշխատանքը 2023 թվականի մարտի 1-ից մինչև ապրիլի 30-ը թվերով 3

5. Հիմնական եզրահանգումներ 3

6. Ինչպիսի միջոցառումներն են թաքնված ամփոփված թվերի հետևում 4

6.1. «Սոցիալական լրատվամիջոցների կառավարման հիմունքներ». մեդիա պրոդյուսեր, «InDatata» թվային գործակալության հիմնադիր Աննա Զեյմանի առցանց դասընթաց 4

6.2. Իսպանական կիթառի երեկո «Արամ Խաչատրյան» համերգասրահում: Համերգ Հայաստանի Հանրապետությունում Իսպանիայի Թագավորության դեսպանության հովանու ներքո: 4

6.3. Արտյոմ Դերվոեդի դասական կիթառի մենահամերգ Նոյեմբերյանի Մշակույթի տանը, Տավուշի մարզ 5

6.4. Արտյոմ Դերվոեդի (Ռուսաստան)՝ «Դասական կիթառի դասավանդման հիմնախնդիրների մասին» թեմայով կլոր սեղան Տավուշի մարզի ք. Նոյեմբերյանի դասավանդողների մասնակցությամբ 5

6.5. Արտյոմ Դերվոեդի դասական կիթառի վարպետաց դաս Կողբ գյուղում, Տավուշի մարզ 5

6.6. Արտյոմ Դերվոեդի դասական կիթառի մենահամերգ Իջևանի երաժշտական դպրոցում, Տավուշի մարզ 6

6.7. Արտյոմ Դերվոեդի վարպետաց դաս Իջևանի երաժշտական դպրոցում 6

6.8. Արտյոմ Դերվոեդի դասական կիթառի մենահամերգ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում 6

6.9. Արտյոմ Դերվոեդի՝ դասական կիթառի վարպետաց դասեր Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում 6

6.10. Արտյոմ Դերվոեդի՝ «Հայաստանում դասական կիթառի դասավանդման հիմնախնդիրների մասին» թեմայով կլոր սեղան Երևանի դասավանդողների մասնակցությամբ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում 7

6.11. Դաշնակահար Լյուկա Դեբարգի վարպետաց դասերը «Արամ Խաչատրյան» համերգասրահի ռոյալի սենյակում 7

6.12. Կլոր սեղան «Երաժշտական մեկնաբանման արվեստ» թեմայով «Արամ Խաչատրյան» համերգասրահի ռոյալի սենյակում 7

6.13. Ելենա Յակովլևայի վարպետաց դասը «Գործակալի հետ աշխատանքն ու կատարողի կարիերան» թեմայով Երևանի կոնսերվատորիայի ուսանողների համար 8

6.14. Պոլինա Օսետինսկայայի վարպետաց դասը «Արամ Խաչատրյան» համերգասրահում 8

6.15. Դաշնակահարուհի Պոլինա Օսետինսկայայի «Բարոկկո երաժշտությունը հեղինակային ֆիլմում» մենահամերգը «Արամ Խաչատրյան» համերգասրահում 8

1. Մեր մասին

«Primavera Foundation Armenia» բարեգործական հիմնադրամը ստեղծվել է 2022 թվականի սեպտեմբերին Անաստասիա Բուդանոկի և Ելենա Յակովլևայի կողմից:

«Primavera Foundation of Armenia» առաքելությունն է ամրապնդել հայ մշակույթի և արվեստագետների միջազգային ինտեգրումը, ծրագրերի և նախաձեռնությունների միջոցով նպաստել Հայաստանի մշակութային ժառանգության ճանաչմանը: Առաքելության մասին՝ https://primavera-foundation.am/trustees/

Հիմնադրամի ստեղծման մասին պաշտոնապես հայտարարվեց 2022 թվականի նոյեմբերի 17-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի ունեցած պատմական համերգի ժամանակ. դաշնակահար Միխայիլ Պլետնյովը ելույթ ունեցավ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ՝ մաեստրո Վլադիմիր Ֆեդոսեևի ղեկավարությամբ:

2. Մեր գործունեությունը 2022 թվանակի դեկտեմբերից մինչև 2023 թվականի փետրվարն ընկած ժամանակահատվածում

2022 թվականի դեկտեմբեր - 2023 թվականի հունվար ամիսներին «Primavera Foundation»-ը նախագծել և պատրաստել է 2023 թվականի մարտ-ապրիլ ամիսների միջոցառումները, այդ թվում՝ համագործակցության ծրագիր Հայաստանի Հանրապետությունում Իսպանիայի Թագավորության դեսպանատան հետ:

Բացի այդ, հիմնադրամի թիմը նախագծել և մեկնարկել է Հայաստանում դասական երաժշտության ոլորտում տարրական, միջնակարգ հատուկ և բարձրագույն մասնագիտական երաժշտական կրթության ուսուցիչների համահայկական հարցում՝ պարզելու ՀՀ-ում ոլորտային իրավիճակը: Հարցումը շարունակվում է մինչև 2023 թվականի հուլիսի 15-ը, հարցման արդյունքները կներկայացվեն մինչև 2023 թվականի հոկտեմբերի 1-ը:

Ավելին՝ հիմնադրամի թիմը գործարկել է հիմնադրամի սոցիալական ցանցերը Facebook-ում և Instagram-ում, ինչպես նաև մշակել և գործարկել է հիմնադրամի կայքէջը՝ www.primavera-foundation.am.

3. Մեր գործունեությունը 2023 թվականի մարտին և ապրիլին

2023 թվականի մարտի 1-ից մինչև ապրիլի 31-ն ընկած ժամանակահատվածում հիմնադրամն անցկացրել է ինքնուրույն կամ հանդես է եկել որպես գործընկեր ընդհանուր 15 միջոցառումների կազմակերպման հարցում: Դրանք են.

- Դասական երաժշտության 4 համերգ ք. Երևանում;
- Դասական երաժշտության 3 համերգ Տավուշի մարզում;
- 5 օր / 45-ական րոպեանոց 23 անհատական վարպետության դաս դասական կիթառի, դաշնամուրի, ինչպես նաև «Գործակալի հետ աշխատանքն ու կատարողի կարիերան» թեմայով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողների համար:
- 3 հանդիպում ՀՀ ուսուցիչների հետ՝ նվիրված Հայաստանի Հանրապետությունում դասական կիթառի դասավանդման խնդիրներին;
- 1 կլոր սեղան «Երաժշտական մեկնաբանության արվեստը» թեմայով;
- 1 առցանց դասընթաց (6 դաս երկու ակադեմիական ժամով) «Սոցիալական լրատվամիջոցների կառավարման հիմունքները» (Social Media Management Fundamentals) թեմայով;

Հիմնադրամի կողմից ինքնուրույն կամ հայկական մշակութային հաստատությունների հետ համագործակցությամբ կազմակերպված միջոցառումներին մասնակցել է ավելի քան 1900 մարդ:

Այս ընթացքում հիմնադրամի փորձագետներն ու արտիստներն են եղել՝ դասական կիթառահարներ Իզաբել Մարտինեսը (Իսպանիա) և Արտեմ Դերվոեդը (Ռուսաստան), դաշնակահարներ Լուկա Դեբարգը (Ֆրանսիա) և Պոլինա Օսետինսկայան (Ռուսաստան), ջութակահար Կարեն Շագալդյանը (Հայաստան), մեդիա պրոդյուսեր Աննա Ձեյմանը (Ռուսաստան), գեղարվեստական ղեկավար, հիմնադրամի գործադիր տնօրեն Ելենա Յակովլևան (Ռուսաստան/Հայաստան):

Հիմնադրամի գործունեության աշխարհագրությունը Հայաստանի Հանրապետությունում. քաղաք Երևան; Տավուշի մարզ. Կողբ գյուղ, քաղաք Նոյեմբերյան, քաղաք Իջևան:

4. «Primavera Foundation» թիմի աշխատանքը 2023 թվականի մարտի 1-ից մինչև ապրիլի 30-ը թվերով

	Միջոցառումներ	Ակտիվ մասնակիցներ (վարպետաց դասեր artistic training)	Ունկնդիրներ և պասիվ մասնակիցներ (վարպետաց դասեր)
Ընդամենը	15	23	> 1860
Off-line / On-line	14 / 1	23 / 2	> 1860/ --
Երևանում / ՀՀ մարզերում	9 / 5	15 / 8	> 1400 / մարզերում > 460

5. Հիմնական եզրահանգումներ

5.1. Ակնկալիքների համաձայն՝ կատարողական և մանկավարժական գործունեության կենտրոնը գտնվում է Երևանում: Մարզերը թերհամալրված են ուսուցիչներով անգամ հիմնական մասնագիտությունների գծով: Խոչընդոտների թվում են Երևանի կոնսերվատորիայի շրջանավարտներին մարզերում աշխատելու աջակցության համակարգի բացակայությունը, ՀՀ մարզերում համերգային և մրցութային գործունեության բացակայությունը, մարզերի միջև փորձի փոխանակման բացակայությունը:

5.2. Կոնսերվատորիայի ուսանողները մասնավոր զրույցներում նշում են ուսումնական գործընթացում համերգային գործունեության գրեթե իսպառ բացակայությունը: Նմանատիպ իրավիճակ, ընդհանուր առմամբ, (մի շարք բացառություններով) նկատվում է նախնական և միջին մասնագիտական երաժշտական կրթության հաստատություններում:

5.3. Մարզային մանկական երաժշտական դպրոցները (ընդհանուր թվով 240 Հայաստանում) ենթակա են մարզային իշխանություններին (քաղաքապետարաններին), այլ ոչ թե ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, ինչը էական ազդեցություն ունի կրթական ծրագրերի, մեթոդական նյութերի հասանելիության և ուսուցիչների որակավորումների վրա մարզերում: Օրինակ՝ «դասական կիթառ» մասնագիտությունը:

5.4. Մասնագիտական 23 անհատական վարպետության դասերի արդյունքների հիման վրա հիմնադրամի փորձագետները հատկորոշել են Կոնսերվատորիայի 2 դաշնամուրի, ինչպես նաև Կոնսերվատորիայի 1 դասական կիթառի 1 ուսանողի, ովքեր ուսումը Եվրոպայում շարունակելու, ինչպես նաև Հայաստանը միջազգային բեմերում ներկայացնելու ներուժ ունեն:

5.5. Դասական կիթառը (ընդհանրապես կիթառը) իր ճանաչելիության, մատչելիության և շարժունակության շնորհիվ երիտասարդների շրջանում ամենապահանջված գործիքների եռյակում է՝ միաժամանակ մնալով «Հայկական ժողովրդական գործիքների» դասում: Կան օրինակներ, երբ ուսուցիչները դասավանդում են «համացանցում»՝ առանց անհրաժեշտ տեխնիկական բազայի և ակադեմիական ռեպերտուարի իմացության: Ընդհանուր առմամբ, գործիքի նկատմամբ հետաքրքրությունը ներուժ է ստեղծում կիթառի միջոցով ունկնդիրների ամենալայն շրջանակներին դասական երաժշտության աշխարհ ներգրավելու համար:

1 Այն վարպետաց դասերը, որոնք կազմակերպվել և անցկացվել են մեկ օրվա ընթացքում, սույն հաշվետվության նպատակների համար համարվում են որպես մեկ միջոցառում:

6. Ինչպիսի միջոցառումներն են թաքնված ամփոփված թվերի հետևում

6.1. «Սոցիալական լրատվամիջոցների կառավարման հիմունքներ». մեդիա պրոդյուսեր, «InDatata» թվային գործակալության հիմնադիր Աննա Զեյմանի առցանց դասընթաց

Տևողություն՝ 6 դասախոսություն, յուրաքանչյուրը 1,5 ժամ:

Թեմաները.

1. Բովանդակության կառավարում. հրապարակումների և բովանդակության տեսակները, ինչպես վիզուալների հիման վրա հայտարարել իրադարձություններ, ինչ է «գործողության կոչը», ինչպես գրել գործողությունների կոչ, ձայնային գրառումների տոնայնություն:
2. Թվային թիմ. դիզայների, տեսանկարահանողի, կայքի մշակողի համար առաջադրանքների սահմանում:
3. Թիրախավորման հիմնական գործիքներ: Համապատասխան լսարանի ընտրություն և գրառումների առաջխաղացում:
4. Վերլուծական գործիքներ: Օգտագործողի վարքագիծ, գրառումների փոխակերպում, լսարանի ներգրավվածություն:
5. «Cross-Promo» համագործակցություններ. ինչպես բանակցել և զարգացնել խաչաձև գովազդային համագործակցություններ: Նյութերի հարցում, նման համագործակցության պայմաններ, մշակում, գովազդային հրապարակումներ, հաստատման գործընթաց:
6. Համայնքի կառավարում. Համայնքի կառավարում «Primavera Foundation'-ի սոցիալական մեդիայի պրոֆիլների օրինակով. համայնքի ձևավորում հետաքրքրության, ադմինիստրատորների հետ շփումների, վիճակագրության հրապարակման և հավաքագրման հիման վրա:

Ամսաթիվ	Ձևաչափ	Մասնակիցների թիվ	Մասնակցության պայմաններ	Մեկնաբանություններ
Մարտի 1 – 19, 2023 թ.	Առցանց դասախոսություն	2	Անվճար + առցանց նվիրատվություն հիմնադրամին	Մասնակցել է հիմնադրամի թիմը: Տեսադասընթացը ձայնագրվել է (աուդիո + վիդեո): Դասախոսի հետ համաձայնությամբ ձայնագրված դասընթացի նյութերից կպատրաստվեն մեթոդական նյութեր և հուշագրեր հայերեն լեզվով:

6.2. Իսպանական կիթառի երեկո «Արամ Խաչատրյան» համերգասրահում: Համերգ Հայաստանի Հանրապետությունում Իսպանիայի Թագավորության դեսպանության հովանու ներքո:

Ամսաթիվ	Քաղաք	Ունկնդիրների թիվ	Մասնակցության պայմաններ	Մասնակիցներ և գործընկերներ
Մարտի 28, 2023 թ.	Երևան	> 700	Մուտքը տոմսերով	Արտյոմ Դերվոեդ (Ռուսաստան) և Իսաբել Մարտինես (Իսպանիա) Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ Հայաստանի Հանրապետությունում Իսպանիայի Թագավորության դեսպանություն

Լրացուցիչ տեղեկատվություն, լուսանկարներ՝:
https://primavera-foundation.am/artyom-dervoed-isabel-martinez-spanish-evening-with-classical-guitar/#concert

6.3. Արտյոմ Դերվոեդի դասական կիթառի մենահամերգ Նոյեմբերյանի Մշակույթի տանը, Տավուշի մարզ

Ամսաթիվ	Մարզ, քաղաք	Մասնակցության պայմաններ	Ունկնդիրների թիվ	Մասնակիցներ և գործընկերներ
Ապրիլի 1, 2023 թ.	Տավուշ, Նոյեմբերյան	Անվճար մուտք	> 200	Արտյոմ Դերվոեդ Նոյեմբերյանի Մշակույթի տուն

Լրացուցիչ տեղեկատվություն, լուսանկարներ՝
https://primavera-foundation.am/artyom-dervoedclassical-guitar/#noyemberyan

«Տավուշ ՀԸ»-ի ռեպորտաժը ք. Նոյեմբերյանում կայացած համերգի և Կողբ գյուղում անցկացված վարպետության դասերի մասին՝ **https://fb.watch/k91m_dwcc/**

6.4. Արտյոմ Դերվոեդի (Ռուսաստան)՝ «Դասական կիթառի դասավանդման հիմնախնդիրների մասին» թեմայով կլոր սեղան Տավուշի մարզի ք. Նոյեմբերյանի դասավանդողների մասնակցությամբ

Ամսաթիվ	Մարզ, Քաղաք	Մասնակիցների թիվ	Մասնակցության պայմաններ	Մասնակիցներ և մեկնաբանություններ
Ապրիլի1, 2023 թ.	Տավուշ, ք. Նոյեմբերյան	15	Անվճար մուտք	Հանդիպմանը մասնակցել էին հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ Մերի Մամիկոնյանը, կիթառի ուսուցչուհի Կարինե Ալեքսանյանը, Տավուշի մարզում հիմնադրամի համակարգող Ելենա Յակովլևան, Արտեմ Դերվոեդը, ինչպես նաև ք. Նոյեմբերյանի մանկական երաժշտական դպրոցի և Մշակութի կենտրոնի ղեկավարներ և ուսուցիչներ:

Լրացուցիչ տեղեկատվություն, լուսանկարներ՝
https://primavera-foundation.am/artyom-dervoedclassical-guitar/#noyemberyan

6.5. Արտյոմ Դերվոեդի դասական կիթառի վարպետաց դաս Կողբ գյուղում, Տավուշի մարզ

Ամսաթիվ	Մարզ, բնակավայր	Ակտիվ մասնակիցների թիվ	Ունկնդիրների թիվ	Մասնակցության պայմաններ	Մեկնաբանություններ
Ապրիլի 2, 2023 թ.	Տավուշ, գյուղ Կողբ	3	25	Անվճար բոլորի համար	Մարզում կիթառը դասավանդվում է սիրողական մակարդակով: Երեխաների կողմից նկատելի է հետաքրքրություն:

Լրացուցիչ տեղեկատվություն, լուսանկարներ՝
https://primavera-foundation.am/artyom-dervoedclassical-guitar/#noyemberyan

6.6. Արտյոմ Դերվոեդի դասական կիթառի մենահամերգ Իջևանի երաժշտական դպրոցում, Տավուշի մարզ

Ամսաթիվ	Մարզ, Քաղաք	Ունկնդիրների թիվ	Մասնակցության պայմաններ	Մասնակիցներ և գործընկերներ
Ապրիլի 3, 2023 թ.	Տավուշ, ք. Իջևան	> 110	Անվճար	Արտյոմ Դերվոեդ Իջևանի երաժշտական դպրոց

Լրացուցիչ տեղեկատվություն, լուսանկարներ՝
https://primavera-foundation.am/artyom-dervoedclassical-guitar/#ljevan

6.7. Արտյոմ Դերվոեդի վարպետաց դաս Իջևանի երաժշտական դպրոցում

Ամսաթիվ	Քաղաք	Ակտիվ մասնակիցների թիվ	Ունկնդիրների թիվ	Մասնակցության պայմաններ	Մեկնաբանություններ
Ապրիլի 3, 2023 թ.	Երևան	5	14	Անվճար	Անհրաժեշտ է համակարգված եղանակով աշխատել ուսուցիչների հետ ուսումնական նյութերի և նվագացանկի առումով:

Լրացուցիչ տեղեկատվություն, լուսանկարներ՝
https://primavera-foundation.am/artyom-dervoedclassical-guitar/#ljevan

6.8. Արտյոմ Դերվոեդի դասական կիթառի մենահամերգ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում

Ամսաթիվ	Քաղաք	Ունկնդիրների թիվ	Մասնակցության պայմաններ	Մասնակիցներ և գործընկերներ
Ապրիլի 6, 2023 թ.	Երևան	> 80	Մուտքը տոմսերով	Համերգը կազմակերպվել է Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի կողմից

6.9. Արտյոմ Դերվոեդի՝ դասական կիթառի վարպետաց դասեր Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում

Ամսաթիվ	Քաղաք	Ակտիվ մասնակիցների թիվ	Ունկնդիրների թիվ	Մասնակցության պայմաններ	Մեկնաբանություններ
Ապրիլի 7, 2023 թ.	Երևան	11	15	Անվճար	Մասնակիցները հիմնականում Երևանի կոնսերվատորիայի ուսանողներն են: Ակտիվ մասնակիցներից մեկը նշվում է որպես HiPo, նպատակահարմար է նրան ուղեկցել Եվրոպայում կրթությունը շարունակելու համար: Եվս երկուսին նպատակահարմար է հետևել համակարգված եղանակով:

Լրացուցիչ տեղեկատվություն, լուսանկարներ՝

6.10. Արտյոմ Դերվոեդի՝ **«**Հայաստանում դասական կիթառի դասավանդման հիմնախնդիրների մասին**»** թեմայով կլոր սեղան Երևանի դասավանդողների մասնակցությամբ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում

Ամսաթիվ	Քաղաք	Մասնակիցների թիվ	Մասնակցության պայմաններ	Մեկնաբանություններ
Ապրիլի 7, 2023 թ.	Երևան	7	Անվճար	Երևանի կոնսերվատորիայի չորս ուսանող-երիտասարդ դասախոս կարող են աշխատել մարզերում հիմնադրամի շրջանակներում:

6.11. Դաշնակահար Լյուկա Դեբարգի վարպետաց դասերը **«**Արամ Խաչատրյան**»** համերգասրահի ռոյալի սենյակում

Ամսաթիվ	Քաղաք	Ակտիվ մասնակիցների թիվ	Ունկնդիրների թիվ	Մասնակցության պայմաններ	Մեկնաբանություններ
Ապրիլի 15, 2023 թ.	Երևան	3	> 30	Անվճար	Ներկայացվել է 9 հայտ, ընտրվել է 3 ակտիվ մասնակից: Բոլոր մասնակիցներն ունեին պատշաճ պատրաստվածություն: Մանրամասները ներկայացված են տեղեկատվական թերթիկում:

Լրացուցիչ տեղեկատվություն, լուսանկարներ՝ **https://primavera-foundation.am/lucas-debargue-the-challenge-of-musical-interpretationmaster-class-and-round-table/#debarg-mc**

6.12. Կլոր սեղան «Երաժշտական մեկնաբանման արվեստ» թեմայով «Արամ Խաչատրյան» համերգասրահի ռոյալի սենյակում

Ամսաթիվ	Քաղաք	Ակտիվ մասնակիցների թիվ	Ունկնդիրների թիվ	Մասնակցության պայմաններ	Մասնակիցներ և գործընկերներ
Ապրիլի 15, 2023 թ.	Երևան	7	> 35	Անվճար	Դաշնակահար Լյուկա Դեբարգ (Ֆրանսիա) Ջութակահար Կարեն Շահգալդյան (Հայաստան) Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ

Լրացուցիչ տեղեկատվություն**,** լուսանկարներ՝ **https://primavera-foundation.am/lucas-debargue-the-challenge-of-musical-interpretationmaster-class-and-round-table/#debarg-rt**

6.13. Ելենա Յակովլևայի վարպետաց դասը «Գործակալի հետ աշխատանքն ու կատարողի կարիերան» թեմայով Երևանի կոնսերվատորիայի ուսանողների համար

Ամսաթիվ	Քաղաք	Ունկնդիրների թիվ	Մասնակցության պայմաններ	Մեկնաբանություններ
Ապրիլի 18, 2023 թ.	Երևան	> 35	Անվճար	Վարպետաց դասը կազմակերպվել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կողմից բոլոր կուրսերի և մասնագիտությունների ուսանողների համար:

Լրացուցիչ տեղեկատվություն, լուսանկարներ՝
https://primavera-foundation.am/artistic-management-career-opportunities-a-master-class-by-elena-yakovleva-at-the-yerevan-komitas-state-conservatory/

6.14. Պոլինա Օսետինսկայայի վարպետաց դասը «Արամ Խաչատրյան» համերգասրահում

Ամսաթիվ	Քաղաք	Ակտիվ մասնակիցների թիվ	Ունկնդիրների թիվ	Մասնակցության պայմաններ	Մեկնաբանություններ
Ապրիլի 19, 2023 թ.	Երևան	3	20	Անվճար բոլորի համար	Ներկայացվել է 5 հայտ, ընտրվել է 3 մասնակից:

Լրացուցիչ տեղեկատվություն, լուսանկարներ՝
https://primavera-foundation.am/polina-osetinskayamaster-class/#osetinskaya-mc

6.15. Դաշնակահարուհի Պոլինա Օսետինսկայայի «Բարոկկո երաժշտությունը հեղինակային ֆիլմում» մենահամերգը «Արամ Խաչատրյան» համերգասրահում

Ամսաթիվ	Մարզ	Ունկնդիրների թիվ	Մասնակցության պայմաններ	Մասնակիցներ և գործընկերներ
Ապրիլի 21, 2023 թ.	Երևան	> 560	Մուտքը տոմսերով	Պոլինա Օսետինսկայա, դաշնամուր Նախագծի գործընկեր՝ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ

Լրացուցիչ տեղեկատվություն՝ **https://www.youtube.com/watch?v=0H5tqzP1MBw**